

ՏԱԹԵՎԻԿ ԱԶԻԶԲԵԿՅԱՆ,

«Շիրակի պետական համալսարան» հիմնադրամ, ՀՀ, Գյումրի,

Էլ. հասցե՝ tatevbekyan@mail.ru

DOI: 10.24234/scientific.v1i43.13

ԱՄՓՈՓՈՒՄ

Նկատի ունենալով հայերենի քերականական համակարգում բայերի տեսակարար կշիռը, իմաստային բազմազանությունը, հաղորդակցական արժեքն ու կապակցական կարողությունները՝ հրատապ է դառնում բայերի իմաստային խմբավորումն ու բառիմաստային խմբերի կապակցական առանձնահատկությունների քննությունը, ինչը կնպաստի բառիմաստի և շարահյուսական-կապակցական փոխադարձաբանականությունների բացահայտմանը:

Ներկայացվող հոդվածում նպատակ ենք հետապնդում ներկայացնել բայական բառապաշարում ամենաբազմանդամ խմբի՝ ասացական բայերի սահմանները, առանձնահատկությունները, դրսևորած կապակցական հնարավորությունները միջին հայերենում:

Միջին հայերենի ասացական բայերի քննությունը ցույց է տալիս, որ ասացական բայերի համար ընդհանուր է տեղեկատվություն հաղորդելու միասնական հատկանիշը: Նկատի ունենալով տեղեկատվություն հաղորդելու բնույթը՝ ասացական բայերի կազմում առանձնացվում են հետևյալ ենթախմբերը՝ խոսողության՝ ա) միագիծ և բ) փոխադարձ ուղղվածության ասացական բայեր: Քննվող խմբի բայերի մեջ կիրառման հաճախականությամբ աչքի է ընկնում ոճականորեն չեզոք *ասել* բայը՝ պայմանավորված վերջինիս բազմիմաստությամբ: Որպես կանոն, ասացական բայերը և ասացական բայերի նշանակությամբ գործածվող այլ բայերն (խոսքաշարային ասացականներ) ունեն կամ ձեռք են բերում երկու խնդիր առնելու հատկություն, որոնցից մեկը ենթադրվում և պահանջվում է

սեռի քերականական կարգի թելադրանքով (ուղիղ խնդիր), մյուսը՝ բայիմաստի թելադրանքով (հանգման/հաղորդման խնդիր):

Բանալի բառեր՝ ասացական բայեր, առաջնային իմաստ, մեջբերվող խոսք, խնդրառություն, երկարժույթ, կրկնասեռ բայեր, միջին հայերեն, ներգործական սեռ, իմաստային խումբ, բանավոր խոսք:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բայերի իմաստային խմբերի առանձնացման փորձեր կատարվել են լեզվաբանության պատմության ողջ ընթացքում:

Հայ լեզվաբանների կողմից (Առաքելյան Վ., Աբրահամյան Ա., Ջահուկյան Գ., Քոսյան Վ.) բայերի իմաստային խմբավորման ուղղությամբ աշխատանքներ կատարվել են դեռևս անցյալ դարում: Առանձնացվել են բայիմաստային մի շարք խմբեր՝ պայմանական անվանումներով (*ասացական, իմացական, զգացական, մտածական, վիճակային, հարկադրական, ակտիվ գործողության, օժտվածության, վերածման կամ փոխարկման* և այլն) (Առաքելյան Վ., 1958), որոնք, սակայն, համալիր ուսումնասիրության չեն ենթարկվել:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաջադիր նպատակին հասնելու համար առաջնորդվել ենք համաժամանակյա նկարագրության, համալիր հետազոտության, վերլուծության և համադրության մեթոդներով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ի տարբերություն բայի իմաստային խմբերի՝ ա) ասացական բայերի իմաստային խումբը լեզվաբանության զարգացման բոլոր փուլերում ուսումնասիրության առարկա է եղել, բ) ուսումնասիրվել են ոչ միայն հայերենի (Աբեղյան Մ., 1965), այլև՝ օտար լեզուների ասացական բայերը: Հարկ է նշել, որ եղած ուսումնասիրություններում ասացական բայերի առանձնացման և սահմանման ելակետը հիմնականում եղել է շարահյուսական սկզբունքը, այն է՝ «եթե որևէ բայ գոնե մեկ անգամ տեքստի մեջ է ներմուծում ուղղակի խոսքը, այն մտցվում է հետազոտվող ցուցակի մեջ, որովհետև «միայն ասացական բայերը կարող են ներմուծել ուղղակի խոսքը» (Леконцева М. И., 1971): Համամիտ լինելով արտահայտված կարծիքին՝ նկատենք, սակայն, որ մեր կողմից ուսումնասիրված

միջինհայերենյան բնագրերում ոչ բոլոր դեպքերում է ուղղակի խոսքը ընդհանուրի մեջ ներմուծվում այնպիսի բայերի միջոցով, որոնք նշում են խոսքը, օրինակ՝ «Եվ *յղարկեաց* մարդ առ թագաւորն թէ՛ – Սպանանե՛մ թէ ի վայր կոխեմ» (ՀՀՄԱՔ), կամ՝ «Իսկ յորժամ մեռաւ թագաւորն, հան ապա, զի կոիվ կային և պատերազմն եղբարք զմիմեանս, *պարտաւորելով* թէ՛ – Դուն ունիս զակն» (ՀՀՄԱՔ):

Ընդգծված բայերը «Միջին հայերենի» բառարանում իրենց ամրագրված իմաստներով ասացական չեն, ուստի, նկատի ունենալով լեզվական այս և նմանօրինակ այլ փաստերը, նպատակահարմար չէ ուղղակի խոսքի ներմուծման օժտվածությունը համարել միայն ասացական բայերի տարբերակիչ հատկանիշ, քանի որ, մի կողմից՝ խոսքի ռճավորման անհրաժեշտությունից ելնելով՝ այդ դերում հանդես են գալիս ոչ միայն ասացական, այլև իրենց բառային նշանակությամբ տարբեր բայեր, մյուս կողմից՝ այդ հատկանիշի հիման վրա ասացական բայերի տարբերակումը հետազոտվող խմբից կբացառեր այնպիսի բայեր, ինչպիսիք են՝ *բազմախօսիլ, գրուցնել, թոթվլել, խորըթել, ճուալ* և այլն, ուստի մեզ համար ընդունելի է ասացական բայերի քննությունն իրականացնել իմաստային և շարահյուսական հատկանիշների հաշվառմամբ:

Ասացական բայերը միավորվում են ընդհանուր իմաստային հատկանիշով, այն է՝ ասացական են համարվում ասվող, արտասանվող, ասելու՝ խոսելու իմաստ ունեցող՝ արտահայտող բայերը (Աղայան Է., 1976), այլ կերպ ասած՝ այս իմաստային խմբի համար ընդհանուր է մտքի արտահայտման կամ բանավոր տեղեկատվության հաղորդման ներունակությունը որպես միասնական հատկանիշ: Խոսողության իրադրությունն ուղեկցվում է մտքի ոչ միայն բանավոր, այլև՝ գրավոր արտահայտմամբ: Ըստ այս հանգամանքի էլ՝ առանձնացվում են *բանավոր* և *գրավոր խոսքի ասացական բայեր*, եթե առաջին տիպի ասացականների համար բնութագրական է բառայնորեն ձևավորված մտքի հաղորդման ներունակությունը, երկրորդների համար՝ բառայնորեն ձևավորված մտքի գրավոր հաղորդման ներունակությունը: Գրավոր խոսքի ասացականները (*արձանագրել, արտագրել, գրել, գրմրել, յիշատակել, մակագրել և այլն*), սակայն, միջին հայերենում զգալիորեն զիջում են բանավոր խոսքի ասացականներին թե՛ քանակապես, թե՛ կիրառման հաճախականությամբ: Հաճախադեպ են հատկապես *գրել* բայի կիրառությունները՝

պայմանավորված այն հանգամանքով, որ վերջինս գրավոր հաղորդման գործընթացն արտահայտում է ընդհանրացված ձևով: Սույն հոդվածի շրջանակներում քննվում են միայն բանավոր խոսքի իրավիճակը նկարագրող բայերը, որոնք պայմանականորեն անվանել ենք բանավոր խոսքի ասացականներ:

Հիմք ընդունելով իմաստային չափանիշը՝ Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի հայտնի բառարանից (Ղազարյան Ռ., 2009) համատարած ընտրանքի եղանակով մեր կողմից կազմվել է ասացական համադրական բայերի բառացանկը, որում ընդգրկել ենք՝

1. բուն կամ առաջնային ասացական բայերը (*աղաղակել, ասել, բարբաջել, զրուցել, զրուցնել, խօսել, հարցնել/հարցնուլ, պատմել, պատասխանել* և այլն),

2. խոսքաշարային կամ երկրորդային ասացական բայերը, որոնք ասացականության ներունակ իմաստ ունեցող, սակայն իրենց առաջնային իմաստով իմաստային այլ խմբի անդամ բայերն են (*աղաչել, ապսպրել, աւելի, գանկրել/գանգրիլ, երդվնալ/երդվնել, կանչել, հա(յ)ցել, հիլայել, հնչել, հրամայել, մախթել, քշիել* և այլն), և որոնց առաջնային իմաստը տվյալ խոսքաշարում դառնում է ասելու, խոսելու ձևը ցույց տվող պարագայական հավելիմաստ՝ արտահայտելով խոսողի կամային, հուզական, գնահատողական վերաբերմունքը:

Այսպես՝ եւ նա *հրամայեաց* սպասատրին ընթանալ զկնի եւ բերել առ նա բռնութեամբ (ՎԱ):

Բերված օրինակում առկա *հրամայել* բայն ունի դրդման, հարկադրման իմաստ, ինչը բնորոշ է կամային բայերի իմաստային խմբին, բայց միևնույն ժամանակ նշված բայը նաև ասացական է, քանի որ նշանակում է *ասել* դրդելով, հարկադրելով, այսինքն՝ *հրամայել* բայի «*պահանջել, դրդել*» առաջնային իմաստն այս և նման կիրառություններում դառնում է ասելու ձևը ցույց տվող պարագայական հավելիմաստ:

Ի տարբերություն բուն ասացականների, որոնք բացառապես *-ել/-իլ* լծորդությամբ ներգործական սեռի բայեր են, խոսքաշարային ասացականների առանձնացված շարքում կան և՛ ներգործական սեռի բայեր (եւ կինն ֆրիաթ *կանչեաց*, թէ՛ – Ինձ խաթունութիւն ո՛չ պիտի...(ՀՀՄԱՔ), և՛ դեռևս գրաբարյան շրջանից ավանդված կրկնասեռ (ներգործական//չեզոք) բայեր, որոնք տվյալ

համատեքստում դրսևորում են ներգործական բայերին բնորոշ խնդրառություն (Եւ այրն աղաչէր. – Սակավ մի համբերէ... (ՀՀՄԱՔ):

Ընդգծենք մի կարևոր հանգամանք ևս. բազմաթիվ ասացական բայեր (*մաղթել, աղաղակել, աղաչել, աղերսել, աղոթել, բարբառել, բարձրաձայնել, բարբաջել, կանչել, չարախօսել* և այլն) գրաբարի բառարանում համարվում են կրկնասեռ, այնինչ միջին հայերենում դրանք հիմնականում պահպանել են միայն չեզոք սեռի իմաստները:

Ըստ մեր դիտարկման՝ տվյալ բայերի չեզոքացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ միջին հայերենում դրանք այլևս բազմիմաստ չեն, չունեն իմաստային լայն ընդգրկումներ, գործածվում են նախկին իմաստների զգալի սահմանափակմամբ: Այս կարգի բայերում սովորաբար պահպանվել են գրաբարյան բազմիմաստ բայերի առաջնային, ուղղակի իմաստները, իսկ երկրորդական նշանակությունները դրսևորվում են խիստ հազվադեպ: Այսպես՝ *մաղթել* բայը գրաբարում կրկնասեռ է՝ 1. ն. *աղաչել, աղերսել, պաղապել, բարեխօսել, միջնորդել, 2. չ. աղօթել, աղօթքով խնդրել* իմաստներով (Ղազարյան Ռ., 2000): Միջին հայերենում նույն բայը (*մախթել/մաղթել*) ունի հետևյալ իմաստը՝ չ. *աղաչել, աղերսել, աղոթքով, աղերսելով խնդրել*՝ Որով *մաղթեսցուք* ի քէն, Հայր բարի, զըթած որդէսէր (Հայրեններ): *Բարբաջել* ասացական բայը գրաբարում ունի հետևյալ իմաստները՝ ն./չ. *վայրիվերոյ՝ ափեղցփեղ, անիմաստ բաներ խօսել, յիմարաբար դուրս տալ, շաղակրարել, դատարկախօսել, ցնդաբանել* (Ղազարյան Ռ., 2000): Միջին հայերենում նույն բայը (*բաղբանջել/բարբաջել*) պահպանել է միայն *բարբաջել* չեզոք սեռի իմաստը՝ Հոգին Քրիստոսի չէ աստուած, որպէս նոքա *բարբաջեն* և այլն:

Ասացական բայերի տարաժամանակյա քննությամբ ակնհայտ է դառնում նաև, որ գրաբարում քերականական մեկ սեռ ունեցող ասացական որոշ բայեր էլ նոր իմաստներ ձեռք բերելու հաշվին միջին հայերենում դրսևորում են կրկնասեռություն: Այսպես՝ *ծայնել* (Ղազարյան Ռ., 2000) բայը գրաբարում իր *ծայն տալ, կանչել* իմաստներով ներգործական սեռի բայ է, մինչդեռ միջին հայերենում *ծենել* (Ղազարյան Ռ. & Ավետիսյան Հ., 2009) բայը իր *ծայն տալ, կանչել, հրավիրել* իմաստներով կրկնասեռ (ներգործական//չեզոք) բայ է, *գանգաւորել* (Ղազարյան Ռ. & Ավետիսյան Հ., 2009) բայը գրաբարում իր *բողոք, տրտունջ*

հայրենի, գանգափ ունենալ իմաստներով չեզոք սեռի բայ է, մինչդեռ միջին հայերենում գանկրել (Ղազարյան Ռ. & Ավետիսյան Հ., 2009) բայն իր 1. գանգափ անել, բողոք հայրենի, գանգափվել, 2. գանգափով հայրենի, արտահայրել, դրսևորել, ցույց տալ իմաստներով չեզոք/ներգործական կրկնասեռ բայ է, գրուցել (Ղազարյան Ռ. & Ավետիսյան Հ., 2009) բայը գրաբարում իր 1. ավանդաբար պատմել, ավանդել 2. բացատրել, 3. խոսակցել, գրույց անել իմաստներով ներգործական սեռի բայ է, միջին հայերենում գրուցել/գրուցնել (Ղազարյան Ռ. & Ավետիսյան Հ., 2009) բայն իր 1. բամբասել, չարախոսել, երևից խոսել, 2. խոսել, խոսակցել, գրույց անել իմաստներով նբ//չբ կրկնասեռ բայ է:

Հայտնի է, որ բանավոր խոսքը երկկողմ գործընթաց է, որը ենթադրում է ոչ պակաս, քան երկու մասնակից՝ խոսող և խոսակից՝ լսող: Ասացական բայերի բառային իմաստի մեջ արտահայտվում է այդ երկկողմ խոսողական գործընթացը, և այս հանգամանքը հաշվի առնելով՝ ասացական բայերի կազմում առանձնացրել ենք հետևյալ հիմնական ենթախմբերը.

1. խոսողության միագիծ ուղղվածության ասացական բայեր,
2. խոսողության փոխադարձ ուղղվածության ասացական բայեր:

1. Խոսողության միագիծ ուղղվածության ասացական բայերը ցույց են տալիս խոսողից լսողին ուղղված խոսքային գործողություն: Միջին հայերենի ասացական բայերի մեծ մասը խոսողության միագիծ ուղղվածության ասացական բայեր են: Նշենք նաև, որ ուղղակի խոսքի ներմուծման հատկանիշը բնորոշ է հիմնականում այս կարգի բայերին, որոնցից են՝ աղաչել, անդրադարձել, ասել, աւելել, գանգափի//գանկրել, երդվնել, խօստանալ, կանչիլ//գանչել, հարց(ա)նել//հարցնուլ, ծայնիլ//ցենել, շարաբանիլ, պատասխանել, փողել, քչիչալ, օրհնել և այլն: Օրինակ՝

Եհարց, թե՛

- Զ՞ինչ նշան իցէ տրտմութեան քո...

Պատասխանեաց, թե՛

- Յամենայն ժամ այդպէս ես, որպէ՛ս գիտացից (<<ՄԱՔ):
- Ճուրիւն տղան գտաւ դեկան մի կարմիր և ծայնեաց մեծածայն, թե՛
- Ես փող մի գտայ (<<ՄԱՔ):

2. Խոսողության փոխադարձ ուղղվածության ասացական բայերը ցույց են

տալիս խոսողական այնպիսի գործողություն, երբ խոսողությունը միակողմանիորեն ուղղված չէ խոսողից լսողին, այսինքն՝ խոսքային փոխհարաբերության մասնակիցները (խոսող անձը և լսողը) որոշակիորեն սահմանազատված չեն միմյանցից:

Միջին հայերենում ասացական բայերի այս ենթախմբում մեջ մտնող բայերը սակավաթիվ են, ինչպես՝ *գրուցնել*, *խորըթել*//*խորաթել*: Օրինակ՝ Քանի որ մեճլիս նստիս՝ Ուներովտ հետ ինձ *գրուցես* (Հայրեններ), Ոչ աչերս քեզ տեսեր, ոչ լեզուս հետդ *խորաթեր* (Հայրեններ):

Մեր կողմից ուսումնասիրված միջինհայերենյան բնագրերում թվարկված բայերի մեջ կիրառման հաճախականությամբ աչքի է ընկնում ոճականորեն չեզոք (Մարության Ա., 1997) *ասել* բայը, ինչը գալիս է լեզվի զարգացման նախորդ շրջանից՝ գրաբարից, և պայմանավորված է այդ բայի իմաստի ընդլայնմամբ:

Ասել բազմիմաստ բայը միջինհայերենյան բնագրերում կիրառվում է բառարանում ամրագրված իր հիմնական և երկրորդական գրեթե բոլոր իմաստներով՝

1. միտքը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մեջբերվող խոսքով արտահայտելու, դիմելու, կոչելու, անվանելու.

Ասէ երանելի տիկինն.

- Ես ոչ եմ արժանի երանութեանց և ոչ պսակաց և ուրախութեանց սրբոցն...(ՀՀՄԱՔ)

Ինձ Զիս *ասեն*:

Եւ նա *ասէ*.

- Քո տղին ի՞նչ *ասեն* (ՀՀՄԱՔ):

Զարմացաւ աղուէսն և *ասէ*.

- Ո՛վ դու չար, ե՞րբ եկիր աստ (ՀՀՄԱՔ):

«Եւ նա ասաց. թէ գրէ ում կամիս. զի *վարձեն* մեզի Ա (1) քօմօրայ (Կ-Պ):

2. Հորդորելու, պատվիրելու, հրամայելու.

Ազգ ճնճկկաց հրապարակ եղին խորիել զորսողաց, իսկ ծեր ոմն *ասաց*. Մի ժողովիք, գուցե լուեալ զձայն թևոց թշնամեաց և թռուցեալ՝ զվատասրտութիւն ծեր յայտ առնիցէք...(Առակներ): Եւ *ասացին* նմա, թէ՛ Ե՛լ ի դրախտէն (ՀՀՄԱՔ):

3. Հանդիմանելու, մեղադրելու.

Եւ *ասաց.*

- Ո՛վ մարդ, յի՞նչ թողուա զգոսացեալ ծառերն և կոտորես զփոքր և զմանր...(ՀՀՄԱՔ):

Եւ *ասէ աղուէսն.*

- Ո՛վ անմիտս և յիմարս, յառաջն պարտ էր ինձ ուտել և ապա գոհանալ զաստուծոյ (ՀՀՄԱՔ):

Եւ նայ ասէ. Ասացին բժշկայապետքն, թէ *հանէք զմորթ արջոյն եւ տաք տաք արկէք ՚ի վերայ առիւծոյն.* Եւ նայ փութով քարշէ զցաւն ՚ի նմանէ (ՎԱԱ):

4. Բացականչելու.

Ասէ խոսօղն. վայ ինձ, թէ այդպիսի գարշելի ձայնիւդ կամէիր կատարել զոսն մեծի սուրբ Կարապետին (ՎԱԱ):

Եւ *ասէ. ո. աւաղ, թէ ուրես զիս* (ՎԱԱ)

Ի յօր մահուն հեծեծագին *Վա~յ ասելով* հանէ զհոգին (ԱՌԲ):

5. Մտածելու, եզրահանգելու.

Ու *ասէ էշն.*

- Ես ոչ փողահար եմ ոչ խաղացող, ապա վայ ինձ, գիտեմ, որ ծանդր բեռ կայ ինձ պահած և կամ ջուր կրելոյ ի հարսանիսն (ՀՀՄԱՔ):

Միջինհայերենյան բնագրերում առկա երկխոսությունների հարցական և պատասխանական նախադասություններում հաճախադեպ է *հարց(ա)նել* և *պատրասխանել* բայերի փոխարեն *ասել* բայի կիրառությունը.

Ասէ աղջիկն՝ Ո՛վ է քո հայրն:

Ասէ մանուկն՝ Հողմն և հուրն:

Ասէ աղջիկն՝ Ո՛վ է քո մայրն:

Ասէ մանուկն՝ Հողն և ջուրն:

Ասէ աղջիկն՝ Յորո՞ւմ կենդանակերպի ծնեալ ես:

Ասէ մանուկն՝ Ո՞վ է քո դայեակն (ՀՀՄԱՔ):

Նկատվում է նաև, որ միջին հայերենում ասացական բայերի բազմազանությունը բնորոշ է այն գործերին, որոնք գրված են, այսպես կոչված, «ոամկախառն» գրաբարով ինչպիսիք են՝ Ներսես Շնորհալու, Մխիթար Հերացու և

այլոց երկերը: Մինչդեռ որքան գրական գործում գերակշռում է տվյալ ժամանակաշրջանի խոսակցական հայերենը, այնքան մեծ է *ասել* բայի կիրառման հաճախականությունը, ինչը ժողովրդական պարզ ու չմշակված ոճի աղբեցություն է:

Միջին հայերենին հարազատ է հավելադրության ոճական հնարքը, որն այս դեպքում դրսևորվում է, երբ մեջբերվող խոսքը մատնանշող հեղինակային խոսքում կիրառվում են մեկից ավելի ասացական բայեր (որոնցից մեկը դարձյալ *ասել* բայն է): Ընդ որում, այդ բայերից մեկը հիմնականում դիմավոր է, մյուսը՝ անդեմ՝

...Եվ նորին իշխանին եղբայրն աշխարհական *հարցեալ'ասէ* ցնա «Ո՛ւստի գաս տէր» (Գանձակեցի):

Երամ ճնճղկու երթեալ առ արագիլ և *աղաչեալ* զնա *ասեն*.

– Ի բոյն քո տեղի մեզ տացես հանել ծագս...(Առակներ):

Իսկ աղուեսն *պատասխանի տուեալ ասէ՝* ով գայլ, 'ի գեղջդ կարդացող չկայ՝ լսող չկայ՝ ի՞նչ կայ, որ թուղթ բերեմ. եւ այնպէս խաբեալ սատակեցին զգայլն (ՎԱԱ):

Միջին հայերենում ուղղակիորեն մեջբերվող խոսքը հեղինակի խոսքի հետ սովորաբար կապակցվում է *թէ*, հազվադեպ *եթէ* (միջին հայերենում *եթէ*-ն արդեն գրաբարաբանություն է դիտվում և հանդիպում է ոչ բոլոր երկերում) ստորադասական շաղկապներով, այսպես՝

Եւ *պատասխանեաց, թէ՝*

– Զձեզ իշխանս կարգելով այնպէս թագաւորեմ եւ ի կատարել ժամանակացն իմոց՝ որդւոց ձերոց թագաւորեցից (ՀՀՄԱՔ):

Իսկ դատաւորն երկուցն սաստէ և *հարցանէ* զհաւքալն, *թէ՝*

– Ընդէ՛ր քարկտեցէր (ՀՀՄԱՔ):

Եհարց ցնոսա, *եթէ՝* «Վա՛սն ձեր եկն անձրևս այս» (ԿԳ):

Ժողովրդական խոսքի ուժեղ ազդեցությամբ միջինհայերենյան բնագրերում, հիմնականում երկխոսություններում, ելնելով խոսքի հերթագայության և սեղմության պահանջներից հաճախադեպ է դառնում ասացական բայերի զեղչումը՝

...իսկ որթոյ հակառակեալ ասաց.

– Ես եմ ուրախարարն, ինձ արժան է լինել:

Եւ թզենի, *թէ՝*

– Ես զի քաղցրաճաշակ՝ ինձ է պարտ:

Իսկ դժնիկ, թե՛

– Ես հարկանող՝ ինձ ի դէպ է (Առականեր):

Ընդունված է ասել, որ իմաստային միևնույն դաշտին պատկանող բայերին բնորոշ է միատեսակ խնդրառություն. բուն կամ առաջնային ասացականներն, առհասարակ, իսկ ասացական բայերի նշանակությամբ գործածվող այլ բայերը խոսքաշարում ունեն կամ ձեռք են բերում երկու խնդիր առնելու հատկություն, որոնցից մեկը սեռի (ուղիղ) խնդիրն է, մյուսը՝ իմաստի թելադրանքով դրված հանգման/հաղորդման խնդիրը: Այսինքն՝ քննվող իմաստային խմբի բայերը խնդրառությամբ երկարժույթ են, ինչը տարբեր դասերի խնդիրների հետ կապակցական մեծ հնարավորություններ է տալիս. երկարժույթ բայերի խնդրառությունը, սեռի խնդիրներից բացի, բնութագրվում է նաև առանձին հոլովածներով կամ կապերով արտահայտված բնության խնդիրների հետ կապակցելիությամբ:

Խնդրառությամբ երկարժույթ ներգործական սեռի ասացական բայերի սեռի խնդիրը հիմնականում իրանիշ է, բնության խնդիրը՝ անձնանիշ, որոշ կիրառություններում անձնավորման հնարքի գործադրման արդյունքում ասացական բայերի բնության խնդիրը ևս իրանիշ է՝

Խոհեմ ոք եհարց զծառս, եթէ զինչ են պատճառք, զի որքան բարձրանայք, այնքան արմատս ի խոր ձգէք (Առականեր), Սըներն ի գերանն ասին. «Սիրու տէրն երդիքն է եկեր» (Հայրեններ): Ղումրին պիլպիլին ասաց. Թէ՛ Քանի՜ ու ծայնդ ու քանի (Հայրեններ):

Արտահատության պլանում սեռի թելադրանքով դրվող ուղիղ խնդիրը կարող է ձևավորվել կա՛մ ա) հայցական հոլովով, բ) կա՛մ անուղղակիորեն մեջբերվող խոսքով, որն արտահայտվում է երկրորդական նախադասությամբ, գ) կա՛մ էլ ուղղակիորեն մեջբերվող խոսքով: Բերենք համապատասխան օրինակներ՝

ա) ...ուստի եւ աղուեսն զայս ասէր, յանկարծակի շարժեցաւ փուշ դառն եւ 'ի վրան կուբլէր (ՎԱԱ):

բ) Ասէ իմաստունն Սողոմոն, թէ գիտութիւնն լոյս է, եւ անգիտութիւնն խաւար է, Աստուած լոյս է (Ամասիացի):

գ) Ասաց թագաւորն.

– Այդմ բանիդ և մեք ամենեքեան վկայ լինիմք... (ՀՀՄԱՔ):

Մեր կողմից ուսումնասիրված միջինհայերենյան բնագրերում հաճախադեպ են հատկապես երկրորդական նախադասությամբ արտահայտված ուղիղ խնդիր լրացումները, երբ ասացական բայ-ստորոգյալին իբրև կրող խնդիր լրացում հանդես է գալիս անուղղակի մեջբերվող խոսքը. Հարցաւ նապաստակ, թէ ընդէ՞ր այդքան գանգիտող ես (Առակներ): ...զի էր այր խաղաղարար եւ քրիստոնեայսէր, եւ բազումք ասէին, թէ Քրիստոսի ծառայ էր (Մեծոփեցի):

Միջին հայերենում ասացական բայերի իմաստի թելադրանքով դրվող հանգման (հաղորդման) խնդիրը ձևավորվում է ոչ միայն գրաբարին բնորոշ «ց+հայցական» կաղապարով՝ ես տեսի զինքն եւ գնացի նմայ եւ սկսայ ասել ցնայ. թէ բարի մարդ. էրէկ կամէիր զիս դժանքով սպանանել (Կ-Պ)), այլև՝

1. տրական հոլովով՝ (Ազդեցին ճգնաւորին զգալուստ թագաւորին... (Ն. Մառ, 220),
2. բացառական հոլովով՝ եւ դատաստանն եհարց Սյրեփանէն. թէ ի՞նչ ճուաբ տայ: Վերոյգրեալ դատաստանն եհարց ի Սարգսէն. թէ հասա՞ւ քեզի քո հախն ի Գրիգորէն: Ուր զայսպիսի բանն Գ (3) անգամ ասաց եւ եհարց ի նոցանէն. որ զիետն գնացել էին. թէ կարգա՞ւ եւ դատաստանա՞ւ ետու ուվեազանեայ (Կ-Պ):
3. «ի/յ+հայցական», «ընդ+հայցական», «առ+հայցական», սակավ դեպքերում՝ «զ+բացառական» նախդրավոր կապակցություններով: Օրինակ՝ Ուստի այժմ կոչեցին զնոսա առաջի դատաստանին եւ հարցան ի Նորսէսն. թէ այն տաւարներն. որ քո հորէն մնաց. զոր կա ի կտակին մէջ գրեալ. զոր եւ ետուն կարդալ զկտակն. ի՞նչ արիր: Աղաղակենք յուսով առ նա բանք գովութեան (Ֆրիկ): ...եւ ասէին առ նա, թէ շատ շնորհակալեմք քեզ (ՎԱԱ): Այր մի ունէր որդի մի. եւ որդին այն եղեւ կրօնաւոր եւ գնաց մտաւ ընդ ծերպով վիմի եւ աղօթէր. եւ եկեալ հայրն եւ մայրն ՚ի ներքս վիմին եւ ասէին ընդ որդին. եկ առ մեզ, զոր տեսանեմք զքեզ (ՎԱԱ):

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բուն կամ առաջնային ասացական բայերը միջին հայերենում բացառապես - ել/-իլ լծորդությամբ ներգործական սեռի բայեր են:

2. Ասացական բայերի սեռի թելադրանքով դրվող ուղիղ խնդիր լրացումը միջին հայերենում արտահայտվում է ա)հայցական հոլովով, բ)անուղղակիորեն մեջբերվող խոսքով, որն արտահայտվում է երկրորդական նախադասությամբ, գ) ուղղակիորեն մեջբերվող խոսքով:
3. Միջին հայերենում հաճախադեպ են ասացական բայերի անուղղակիորեն մեջբերվող խոսքով արտահայտված լրացումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Աբեղյան Մ.** (1965). *Հայոց լեզվի տեսություն*. Երևան: ԵՊՀ.
- Աղայան Է.** (1976). *Արդի հայերենի բացատրական բառարան*, Երևան: Հայաստան.
- Առաքելյան Վ.** (1958). *Հայերենի շարահյուսություն*. Երևան: ԳԱ.
- Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Մ.** (1987). *Միջին հայերենի բառարան*, Vol. 1, Երևան: ԵՊՀ.
- Ղազարյան Ռ. Ս.** (2000). *Գրաբարի բառարան*, Vol. 1, Երևան: ԵՊՀ.
- Մարության Ա.** (1997). Ոճագիտական մի քանի հասկացությունների մասին. *Բանբեր Երևանի Համալսարանի*, 3(93), 77-88.
- Лекомцева М. И.** (1971). К семантической характеристике глаголов говорения в Марнинском кодексе.. *Труды По Знаковым Системам* V, 5(284), 437-462.

REFERENCE LIST

- Abegyan M.** (1965). *Teoriya armyanskogo yazyka (Theory of the Armenian language)*. Erevan: EGU.
- Agayan E.** (1976). *Tolkovyj slovar' sovremennogo armyanskogo yazyka (Explanatory dictionary of modern Armenian language)*. Erevan: Armeniya.
- Arakelyan V.** (1958). *Sintaksis armyanskogo yazyka (Syntax of the Armenian language)*. Erevan: GA.
- Kazaryan R., Avetisyan O.** (1987). *Srednearmyanskij slovar (Middle Armenian dictionary)*. Erevan: EGU.
- Kazaryan R. S.** (2000). *Slovar' Grabarya (Dictionary of Grabar)*. Vol. 1, Erevan: EGU.

- Marutyan A.** (1997). O neskol'kih stilisticheskikh koncepciyah (*About several stylistic concepts*). ZHurnal Erevanskogo universiteta, 3(93), 77-88.
- Lekomceva M. I.** (1971). K semanticheskim harakteristikam razgovornyh glagolov v kodekse Marnina (*On the semantic characteristics of speaking verbs in the Marnin code*). Raboty po znakovym sistemam V, 5(284), 437-462.

РЕЗЮМЕ

ГЛАГОЛЫ ГОВОРЕНИЯ В СРЕДНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ТАТЕВИК АЗИЗБЕКЯН

Учитывая удельный вес глаголов в армянской грамматической системе, семантическое разнообразие, коммуникативное значение и коммуникативные способности, становится актуальным анализ семантической группировки глаголов и соединительных признаков лексических групп, что будет способствовать раскрытию лексического значения и синтаксически-конъюнктивные взаимосвязи.

В представленной статье мы стремимся представить границы, характеристики и коммуникативные возможности самой разнообразной группы глаголов в глагольной лексике – глаголов говорения в средне-армянском языке.

Анализ глаголов говорения в средне-армянском языке показывает, что этим глаголам присуще общее качество сообщения информации. Исходя из данного факта, в глаголах говорения выделяются следующие подгруппы: а) однонаправленные и б) взаимно-направленные (обратные) глаголы говорения. В группе исследуемых глаголов частотой употребления выделяется стилистически нейтральный глагол *сказать (shubj)*, исходя из многозначности указанного глагола. Как правило, глаголы говорения или другие глаголы, употребляющиеся в значении говорения, обладают либо приобретают качеством переходности с двумя дополнениями, одно из которых предполагается и продиктовано грамматическим разрядом залога (прямое дополнение), второе – значением глагола (косвенное дополнение). Иначе говоря, глаголы исследуемой группы принимают два

дополнения.

Ключевые слова: глаголы говорения, первичное значение, цитата (цитируемое высказывание), переходность, двоякость, глаголы, имеющие два залога, средне-армянский язык, действительный залог, семантическая группа, устная речь.

ABSTRACT

'SPEAKING' VERBS IN MIDDLE ARMENIAN

TATEVIK AZIZBEKYAN

Identifying specific weight of verbs in the Armenian grammatical system, semantic diversity, communicative value, and communicative abilities, it is imperative to analyze the semantic grouping of verbs and the connective features of lexical groups, which will contribute to the discovery of lexical meaning and syntactic-conjunctive interrelationships. The purpose of this article is to show the boundaries, features, and linguistic potential of the most diversified collection of verbs in the lexicon-proverbial verbs.

The analysis of verbs denoting 'speaking' in Middle Armenian brings to the conclusion that these verbs possess a common quality - that of telling information. Based upon this fact one can say that there are two subgroups within these verbs: a) single-stream and b) reciprocal verbs denoting speaking. Within the studied verbs, the stylistically neutral verb 'say' which is the most frequently used one due to its polysemy. As a rule, the verbs denoting speaking or other verbs used in the same meaning possess or gain the transitivity with two objects, one of which is presupposed or imposed by the grammatical rank of the verb (direct object) and the second – by the meaning of the verb (indirect object). In other words, the verbs of the studied group take two objects.

Keywords: words denoting speaking, the primary meaning, quotation, transitivity, duality, double-voice verbs, middle Armenian, active voice, semantic group, oral speech.

Հոդվածը ստացվել է ' 14.04.2022 :

Հոդվածը ուղարկվել է գրախոսման՝ 05.05.2022:

Հոդվածը երաշխավորվել է հրատարակման՝ 23.06.2022: